Հուսիկ Արա

Անքեզ

Դու ամբողջովին իմ եսն էիր՝
առանց մասի.
հիմա, երբ տարել ես քեզ,
ինձնից փշուր չի մնացել:

Քեզնից հետո ուրիշ դատարկ եմ,
քո օտար գնալուց՝ տարբեր ամայի…
Իմ կյանքն էիր և տարար քեզ հետ.
հիմա չկա երկինք,
ո՛չ արև, ո՛չ հորիզոն, ո՛չ աստղեր,
չկա հողը,
և՛ քաղաք, և՛ փողոց, և՛ հասցե:
Իմ լույսն էիր ու գնացիր ինձնից,
ցերեկն ու գիշերը,
և օրեր, որ ետ չեն բերելու քեզ,
իմ ներշնչանքն էիր՝ բաց գեղեցկություն.
հիմա բառեր են անկեզ, ցամաք, խոնազուրկ:

Կանոններ չգիտեմ այս նոր աշխարհում՝
ինչով են ապրում ու մեռնում են ինչից,
և չեմ էլ իմանա, թե ինչպես լեզու գտնեմ
սույն աշխարհի հետ ու մենության՝
անհասկանալի, անբովանդակ ու անքեզ:

Քեզնից հետո ուրիշ հետո է,
քեզնից ամային՝տարբեր լռություն: